«ԴԻԼԻՋԱՆ»
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ

<<Դիլիջան>> ազգային պարկը գտնվում է հանրապետության հյուսիս-արևելքում: Պարկը տարածվում է Փամբակի, Արեգունու, Միափորի, Իջևանի և Հալաբի լեռնաշղթաների լանջերին 1070-2800 մ բարձրությունների վրա: Պարկի տարածքը կազմում է 33765 հա:

«ԴԻԼԻՋԱՆ»
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ
ՏԱՐԱԾՔԸ՝ 33765 հա

Պարկի տարածքը Հայաստանի բնաշխարհի եզակի անկյուններից է, որն առանձնանում է հարուստ և յուրօրինակ կենսաբազմազանությամբ: Խիստ կտրտված ռելիեֆը ստեղծում է բնական պայմանների բացառիկ բազմազանություն:

«Դիլիջան» ազգային պարկը ունի հարուստ և բազմազան բուսաշխարհ: Զբաղեցնելով ՀՀ տարածքի մոտ 1%-ը՝ այն իր մեջ ընդգրկում է Հայաստանի անոթավոր բույսերի ավելի քան 25%-ը՝ 977 տեսակ:

Խաստուտիկ

Սզնվամորի

Գորտնուկ գարնանային

Երիցուկ

Պարկի տարածքում և նրա պահպանական գոտում առկա են 480 տեսակի և ենթատեսակի սնկեր:

Տամպինիոն

Հովանոցասունկ

Գոր շարքասունկ

Պարկի կենդանական աշխարհը ունի հարուստ տեսակային կազմ: Այն ընդգրկում է կաթնասունների 49 տեսակ (կովկասյան գորշ արջ, գայլ, ջրասամույր, եղնիկ, կզաքիս, անտառային կատու, լուսան...):

Գորշ արջ

Ilmu

Եղնիկ /կիսապր/

Թռչունների 147 տեսակ (մարեհավ, լոր, գորշ կաքավ, կասպիական հնդկահավ, վայրի աղավնի…):

Սարեհավ

Սապսան

Կապտափող սոխակ

Սողունների 19 տեսակ (կրիա, հայկական մողես, Դալի մողես, Ռոստոմբեկի մողես, օձերի տարբեր տեսակներ…):

Միջերկրածովյան կրիա

Պղնձաձ

Uuhںoձ

Երկկենցաղների 5 տեսակ (կանաչ դոդոշ, լճագորտ, Շելկովնիկի ծառագորտ…), ձկների 9 տեսակ (կարմրախայտ, բեղլու, կողակ…):

Պարկի տարածքում են գտնվում Պարզ և Գոշ (տզրկա) լճերը, Աղավնավանքի կենու պուրակը, հանքային ջրի աղբյուրներ:

Պարկի տարածքը հարուստ է նաև պատմամշակութային հուշարձաններով: Այստեղ առկա են պատմության և մշակույթի 473 հուշարձաններ՝ քաղաքատեղիներ, գյուղատեղիներ, կամուրջներ, եկեղեցիներ, վանական համալիրներ, մատուռներ…

Հուշարձանների ժամանակային բազմազանությունն ընդգրկում է մ.թ.ա. 60-50 հազարամյակից մինչև մեր դարաշրջանը:

Այստեղ է գտնվում միջնադարյան Հայաստանի հոգևոր և մշակութային կենտրոններ հանդիսացող Հաղարծին վանքը (11-13-րդ դարեր) և Գոշավանքը (Նոր Գետիկի վանք 12-13-րդ դարեր):

Պարկի տարածքում է գտնվում Մաթոսավանքը (10-13-րդ դարեր), Ջուխտակ վանքը (12-13-րդ դարեր), Աղավնավանքի ս. Աստվածածին անապատ եկեղեցին (11-13-րդ դարեր):

Պարկի հարուստ և յուրօրինակ կենսաբազմազանությունը, բնության գեղատեսիլ վայրերը և պատմամշակութային հուշարձանները կարող են բացառիկ հետաքրքրություն ներկայացնել էկոտուրիզմի զարգացման համար:

<<Դիլիջան>> ազգային պարկը ներկայումս առաջարկում է մի շարք հետաքրքիր էկոերթուղիներ, որոնք ներառում են պարկի տարածքում առկա պատմամշակութային և բնության հուշարձանները, ինչպես նաև պարկի հրաշագեղ բնության յուրահատուկ անկյունները:

Ազգային պարկը կարող է տրամադրել անհրաժեշտ պարագաներ՝ վրաններ, քնապարկեր, ուսապարկեր, ձեռնափայտեր, հեռադիտակներ, կողմնացույցներ…

«Եթե դրախտում կան անտառներ, լեռներ եվ հանքային ջրեր, ապա դրախտը նման կլինի Դիլիջանին»:

Շնորհակալություն…